**Հավելված 3**
**<<ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով**
**ընթացակարգի հրավերի**

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

# ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ

# ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14

**գ. ______________** **«__» «__________» 2014թ.**

<<_________________>> ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն ____________________յան, որը գործում է <<-------------------------->> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «______________________» _____-ն, ի դեմս տնօրեն _____________յանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված դեղորայք և պատվաստանյութեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողը արտոնյալ և անհատույց պայմաններով տրամադրվող դեղորայքը հանձնում է Ստացողին՝ գնորդի կողմից հաստատված դեղատոմսին համապատասխան, դեղատոմսը ներկայացնելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում:

2.2 Վաճառողը առաջին բուժ-օգնության դեղորայքը հանձնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը,

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը,

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) հանձնվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը,

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին,

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը,

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,

3.4.8 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ___________ **(______________________)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է Պայմնագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանգրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ մինչև Ապրանքի հանձնման ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը գնորդին է ներկայացնում հանձնած ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունները ստորագրվում են, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պյմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի  չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված  տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի  չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը  չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

9.3 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով  Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4  Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանգիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությմբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում և դրանց փոփոխությունը գնահատվում է՝ հետևյալ կերպ. ______________________________________________________________________________________________________

______________________________________________________________________________________________________

________________________________________________________________________________________________

Կարգը սահմանվում է Պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումները:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ….. /…../ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ________________________________ | ________________________________ |
| _______________________ | _______________________ |
| __________________________ | __________________________ |
| _____________________________ | _____________________________ |
| __________________________ | __________________________ |
| --------------------------___ __________ | --------------------------___ __________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1

<<__>> <<____________>> 2014 թ.-ի կնքված

ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14 ծածկագրով

գնման պայմանագրի

# ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափ. Համար | Չափաբաժնի անվանումը | Տեխնիկական բնութգիր | Չափ. Միավոր | Քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | ամլոդիպին | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 2 | ամօքսիցիլին | Դեղաձևը՝ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, դեղաչափը՝ 250մգ/5մլ, 60մլ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | շշիկ | **2** |
| 3 | ացետիլսալիցիլաթթու | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 100մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **70** |
| 4 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 150մգ+30.39մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **120** |
| 5 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 75մգ+15.2մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **120** |
| 6 | բիսակոդիլ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, աղելույծ , դեղաչափը՝ 5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **10** |
| 7 | բիսոպրոլոլ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 2.5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 8 | գլիկլազիդ | Դեղաձևը՝ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ, դեղաչափը՝ 60մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 9 | էնալապրիլ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 10մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **90** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | էնալապրիլ, հիդրոքլորոթիազիդ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 10մգ+25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 11 | իզոսորբիդի դինիտրատ | Դեղաձևը՝ դեղահատեր երկարատև ձերբազատմամբ, դեղաչափը՝ 20մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 12 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | Դեղաձևը՝ դեղապատիճներ, դեղաչափը՝ 280մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դպճ | **10** |
| 13 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | Դեղաձևը՝ դեղապատիճներ, դեղաչափը՝ 180մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դպճ | **10** |
| 14 | կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ | Դեղաձևը՝ դեղահատեր ծամելու, նարնջի համով, դեղաչափը՝ 1250մգ+5մկգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 15 | կապտոպրիլ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **40** |
| 16 | կարվեդիլոլ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 12,5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **40** |
| 17 | կարվեդիլոլ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 18 | մեթիլպրեդնիզոլոն | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 4մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 19 | մենթոլ, բուսական յուղեր | Դեղաձևը՝ քսուք, դեղաչափը՝ 25գ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | սրվակ | **1** |
| 20 | մոքսոնիդին | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 0,4մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **15** |
| 21 | նեբիվոլոլ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 22 | նեոմիցին, պոլիմիքսին B, դեքսամեթազոն | Դեղաձևը՝ականջակաթիլներ, դեղաչափը՝ 650000ՄՄ/100մլ+ 1000000ՄՄ/100մլ+ 100մգ/100մլ,  10.5մլ : Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | շշիկ | **1** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | նիտրոգլիցերին | Դեղաձևը՝ դեղահատեր ենթալեզվային , դեղաչափը՝ 0,5մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **40** |
| 24 | պերինդոպրիլ արգինին, ինդապամիդ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 5մգ+1,25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 25 | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 10մգ+10մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 26 | պիրացետամ | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 800մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 27 | ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 5մգ+25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 28 | սենոզիդներ A, B | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 70մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 29 | սպիրոնոլակտոն | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 25մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **20** |
| 30 | սպիրոնոլակտոն | Դեղաձևը՝ դեղապատիճներ, դեղաչափը՝ 50մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դպճ | **30** |
| 31 | վինպոցետին | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 10մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **15** |
| 32 | վիտամին A, վիտամին D3, վիտամին C, վիտամին B1, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B12, վիտամին PP, վիտամին B5, ֆոլաթթու, կալցիում, ֆոսֆոր | Դեղաձևը՝ պաստեղներ, դեղաչափը՝ 600ՄՄ+80ՄՄ+ 10մգ+0,25մգ+0,3մգ+0,3մգ+0,2մկգ+3մգ+ 1,2մգ+0,04մգ+ 12,5մգ+10մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | հատ | **30** |
| 33 | տամօքսիֆեն | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 20մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 34 | տրիմետազիդին | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 20մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |
| 35 | տրիմետազիդին | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, կարգավորվող ձերբազատմամբ, դեղաչափը՝ 35մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 36 | տրիմետազիդին | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, երկարատև ձերբազատմամբ, դեղաչափը՝ 35մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **120** |
| 37 | ֆամոտիդին | Դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը՝ 20մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **30** |
| 38 | ֆուրոսեմիդ | Դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը՝ 40մգ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր): | դհտ | **60** |

**Դեղերի պիտանիության ժամկետները հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝**
**ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,**
**բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,**
**գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:**

**Ելնելով ազգաբնակչության սպասարկման բարելավման պայմաններից և հիվանդների սպասարկումը հարմարավետ և դյուրին դարձնելու պահանջներից, սահմանվում է պարտադիր պայման՝ մատակարարումը լինի դեղատնից՝ <<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում (գ. Արգավանդ, գ.Ազատաշեն) կամ սահմանակից համայնքներում:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ________________________________ | ________________________________ |
| _______________________ | _______________________ |
| __________________________ | __________________________ |
| _____________________________ | _____________________________ |
| __________________________ | __________________________ |
| ---------------------------___ ___________ | ---------------------------___ ___________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 2

<<__>> <<___________>> 2014 թ.-ի կնքված

ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14 ծածկագրով

գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ Հ | Չափաբաժնի անվանումը | Չափ. Միավոր | Միավորի գինը / դրամ/ | Նախատեսվում է գնել 2014թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին | քանակ | գին |
| 1 | ամլոդիպին | դհտ | | | | | | | | 30 | | 30 | |
| 2 | ամօքսիցիլին | շշիկ | | | | | | | | 2 | | 2 | |
| 3 | ացետիլսալիցիլաթթու | դհտ | | | | | | | | 70 | | 70 | |
| 4 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | դհտ | | | | | | | | 120 | | 120 | |
| 5 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | դհտ | | | | | | | | 120 | | 120 | |
| 6 | բիսակոդիլ | դհտ | | | | | | | | 10 | | 10 | |
| 7 | բիսոպրոլոլ | դհտ | | | | | | | | 30 | | 30 | |
| 8 | գլիկլազիդ | դհտ | | | | | | | | 30 | | 30 | |
| 9 | էնալապրիլ | դհտ | | | | | | | | 90 | | 90 | |
| 10 | էնալապրիլ, հիդրոքլորոթիազիդ | դհտ | | | | | | | | 60 | | 60 | |
| 11 | իզոսորբիդի դինիտրատ | դհտ | | | | | | | | 60 | | 60 | |
| 12 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | դպճ | | | | | | | | 10 | | 10 | |
| 13 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | դպճ | | | | | | | | 10 | | 10 | |
| 14 | կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ | դհտ | | | | | | | | 30 | | 30 | |
| 15 | կապտոպրիլ | դհտ | | | | | | | | 40 | | 40 | |
| 16 | կարվեդիլոլ | դհտ | | | | | | | | 40 | | 40 | |
| 17 | կարվեդիլոլ | դհտ | | | | | | | | 60 | | 60 | |
| 18 | մեթիլպրեդնիզոլոն | դհտ | | | | | | | | 60 | | 60 | |
| 19 | մենթոլ, բուսական յուղեր | սրվակ | | | | | | | | 1 | | 1 | |
| 20 | մօքսոնիդին | դհտ | | | | | | | | 15 | | 15 | |
| 21 | նեբիվոլոլ | դհտ | | | | | | | | 60 | | 60 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | նեոմիցին, պոլիմիքսին B, դեքսամեթազոն | 22իկ | | | | | | | | **1** | | **1** | |
| 23 | նիտրոգլիցերին | դհտ | | | | | | | | **40** | | **40** | |
| 24 | պերինդոպրիլ արգինին, ինդապամիդ | դհտ | | | | | | | | **60** | | **60** | |
| 25 | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին | դհտ | | | | | | | | **60** | | **60** | |
| 26 | պիրացետամ | դհտ | | | | | | | | **30** | | **30** | |
| 27 | ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ | դհտ | | | | | | | | **30** | | **30** | |
| 28 | սենոզիդներ A, B | դհտ | | | | | | | | **30** | | **30** | |
| 29 | սպիրոնոլակտոն | դհտ | | | | | | | | **20** | | **20** | |
| 30 | սպիրոնոլակտոն | դպճ | | | | | | | | **30** | | **30** | |
| 31 | վինպոցետին | դհտ | | | | | | | | **15** | | **15** | |
| 32 | վիտամին A, վիտամին D3, վիտամին C, վիտամին B1, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B12, վիտամին PP, վիտամին B5, ֆոլաթթու, կալցիում, ֆոսֆոր | հատ | | | | | | | | **30** | | **30** | |
| 33 | տամօքսիֆեն | դհտ | | | | | | | | **30** | | **30** | |
| 34 | տրիմետազիդին | դհտ | | | | | | | | **60** | | **60** | |
| 35 | տրիմետազիդին | դհտ | | | | | | | | **60** | | **60** | |
| 36 | տրիմետազիդին | դհտ | | | | | | | | **120** | | **120** | |
| 37 | ֆամոտիդին | դհտ | | | | | | | | **30** | | **30** | |
| 38 | ֆուրոսեմիդ | դհտ | | | | | | | | **60** | | **60** | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

____________________

________________________________

_______________________

__________________________

_____________________________

__________________________

---------------------------___ ____________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________

________________________________

_______________________

__________________________

_____________________________

__________________________

---------------------------___ ____________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3

<<__>> <<____________>> 2014 թ.-ի կնքված

ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14 ծածկագրով

գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար % | Փետրվար % | Մարտ % | Ապրիլ % | Մայիս % | Հունիս % | Հուլիս % | Օգոստոս % | Սեպտեմբեր % | Հոկտեմբեր % | Նոյեմբեր % | Դեկտեմբեր % | Ընդամենը Տարի % |
| 1 | ամլոդիպին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 2 | ամօքսիցիլին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 3 | ացետիլսալիցիլաթթու | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 4 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 5 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 6 | բիսակոդիլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 7 | բիսոպրոլոլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 8 | գլիկլազիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 9 | էնալապրիլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 10 | էնալապրիլ, հիդրոքլորոթիազիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 11 | իզոսորբիդի դինիտրատ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 13 | լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 14 | կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 15 | կապտոպրիլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 16 | կարվեդիլոլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 17 | կարվեդիլոլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 18 | մեթիլպրեդնիզոլոն | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 19 | մենթոլ, բուսական յուղեր | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 20 | մօքսոնիդին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 21 | նեբիվոլոլ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 22 | նեոմիցին, պոլիմիքսին B, դեքսամեթազոն | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 23 | նիտրոգլիցերին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 24 | պերինդոպրիլ արգինին, ինդապամիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 25 | պերինդոպրիլի արգինին, ամլոդիպին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 26 | պիրացետամ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 27 | ռամիպրիլ, հիդրոքլորոթիազիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 28 | սեննոզիդներ A, B | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 29 | սպիրոնոլակտոն | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 30 | սպիրոնոլակտոն | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 31 | վինպոցետին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | վիտամին A, վիտամին D3, վիտամին C, վիտամին B1, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B12, վիտամին PP, վիտամին B5, ֆոլաթթու, կալցիում, ֆոսֆոր | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 33 | տամօքսիֆեն | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 34 | տրիմետազիդին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 35 | տրիմետազիդին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 36 | տրիմետազիդին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 37 | ֆամոտիդին | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |
| 38 | ֆուրոսեմիդ | | | | | | | | | | | 30 | 100 | 100 |

**ԳՆՈՐԴ**

______________________
___________________________________
_________________________
____________________________
_______________________________
____________________________

--------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

______________________
___________________________________
_________________________
____________________________
_______________________________
____________________________

--------------------------___ ___________
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 4**
**<<__>> <<___________>> 2014 թ.-ի կնքված**
**ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14 ծածկագրով**
**գնման պայմանագրի**

| **Վաճառող** | **Գնորդ** |
|---|---|
| ___________________________________ | ________________________________ |
| *գտնվելու վայրը*_________________________ | *գտնվելու վայրը*____________________ |
| ___________________________________ | ________________________________ |
| ___________________________________ | ________________________________ |
| ՀՎՀՀ՝______________________________ | ՀՎՀՀ՝___________________________ |
| ՀՀ՝_________________________________ | ՀՀ՝_____________________________ |
| ___________________________________ | ________________________________ |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N __

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**«__» «___________» 2014թ.**

Պայմանագրի անվանումը՝ ___________________________________:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «___________» 2014թ.
Պայմանագրի համարը՝ **N______________________**

Գնորդն, ի դեմս տնօրեն՝ __________________յանի և Վաճառողն՝ ի դեմս տնօրեն՝ _______________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «___________» 2014թ.-ից «__» «___________» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները.

| **Գնման առարկայի անվանումը** | **Գնման առարկայի քանակական ցուցանիշները** | **Հանձնման ժամկետը** | **Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/** | **Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/** |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | ________ | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ______________________ | ______________________ |
| (Ազգանուն, Անուն) | (Ազգանուն, Անուն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |